ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1240 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 771-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի «Տնտեսական երկարաժամկետ զարգացմանն ուղղված ծրագրերը հաստատելու մասին» N 771-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.2-րդ, 3.3-րդ, 3.4-րդ կետերով և N 1.1 աղյուսակով.

«3.2. Թույլատրել կառավարչին՝

1) օտարել ֆոնդի կողմից մասնավոր բաժնեմասնակցային ներդրումների արդյունքում ձեռք բերված բաժնետոմսերը՝ օտարման գին սահմանելով մասնավոր բաժնեմասնակցային ընկերությունում ներդրված գումարի չափի և դրա ներդրման օրվանից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը հաշվարկված տոկոսավճարների հանրագումարը՝ նվազեցնելով վճարված շահութաբաժինները: Որպես տոկոսավճարների հաշվարկման տարեկան դրույքաչափ (պարզ տոկոս)

սահմանել 10.2720%՝ 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը.

2) մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը սույն հավելվածի N 1.1 աղյուսակում ընդգրկված ընկերություններին և այդ ընկերությունների մյուս բաժնետերերին (այսուհետ՝ մասնավոր գործընկերներ) ներկայացնել սույն հավելվածի 3.2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերին համապատասխան առաջարկներ՝ մինչև 2026 թվականի մարտի 31-ը ֆոնդին պատկանող բաժնետոմսերը ձեռք բերելու վերաբերյալ, ընդ որում՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը գրավոր համաձայնություն սույն հավելվածի 3.3-րդ ու 3.4-րդ կետերով նախատեսված՝ համապատասխանաբար բանկային երաշխիք ներկայացնելու կամ կանխավճար իրականացնելու պայմանով.

3) սույն հավելվածի 3.2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը և 3.3-րդ և 3.4-րդ կետերով նախատեսված՝ համապատասխանաբար բանկային երաշխիքը կամ կանխավճարն ստանալու դեպքում մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը բաժնետերերի միջև կնքված բաժնետիրական համաձայնագրերում իրականացնել համապատասխան փոփոխություններ:

3.3. Պետությունը մասնավոր գործընկերներին կարող է տրամադրել բյուջետային վարկ սույն հավելվածի 3.2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված եկամտաբերությանը համարժեք տոկոսադրույքով, մինչև 10 (տասը) տարի մարման ժամկետով՝ բաժնետոմսերի օտարման գումարի և բյուջետային վարկի առաջին տարվա հաշվարկված տոկոսավճարների հանրագումարի չափով բանկային երաշխիք ներկայացնելու դեպքում:

3.4. Մասնավոր գործընկերները սույն հավելվածի 3.3-րդ կետով նախատեսված բյուջետային վարկից չօգտվելու դեպքում սույն հավելվածի 3.2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը ներկայացնելու հետ

մեկտեղ պետք է իրականացնեն ֆոնդի կողմից համապատասխան ընկերությունում ներդրված գումարի չափով կանխավճար, իսկ բաժնետոմսերի վաճառքի գնի մնացած մասը վճարեն մինչև պայմանագրի կնքումը՝ 2026 թվականի մարտի 31-ը:»:

«Աղյուսակ N 1.1

«ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ+ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ» ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հ/Հ	Ընկերության անվանում	Ֆինանսավորման տարեթիվ	Ֆինանսավորման գումար /ՀՀ դրամ/	Ելքի հաշվարկային ամսաթիվ	Ժամկետ ներդրման օրվանից մինչ 12/31/2025 /օր/	Կուտակված եկամտաբերություն՝ տարեկան 10.2720 տոկոս եկամտաբերության պարզ տոկոսի հաշվարկի հիման վրա	Կուտակված եկամուտ ամբողջ ժամանակահատվածի համար /ՀՀ դրամ/	Նախկինում վճարված շահութաբաժիններ /ՀՀ դրամ/	Առաջարկվող օտարման գին /ՀՀ դրամ/	Բյուջետային վարկի ստացման համար ներկայացվող բանկային երաշխիքի գումարը /ՀՀ դրամ/	Կանխավճարի գումարը՝ բյուջետային վարկից չօգտվելու դեպքում /ՀՀ դրամ/
1	«ԷյԷմՍԻ» ՓԲԸ	12/8/2022	287,460,568	12/31/2025	1119	31.5%	90,525,412		**377,985,980**	**416,812,700**	**287,460,568**
2	«Գլոբալ Քոնեքթ» ՓԲԸ	3/18/2022	350,000,000	12/31/2025	1384	38.9%	136,322,104				
		4/20/2022	300,000,000	12/31/2025	1351	38.0%	114,061,414				
		6/2/2022	50,000,000	12/31/2025	1308	36.8%	18,405,173				
		Ընդամենը	700,000,000				268,788,690	47,559,306	**921,229,384**	**1,015,858,067**	**700,000,000**
3	«Ապագափրոջեքթս» ՓԲԸ	3/4/2022	796,250,000	12/31/2025	1398	39.3%	313,269,968		**1,109,519,968**	**1,223,489,859**	**796,250,000**

4	**«Բերրիմաունթ» ՓԲԸ**	1/25/2023	135,483,875	12/31/2025	1071	30.1%	40,835,627				
		1/25/2023	564,516,125	12/31/2025	1071	30.1%	170,148,439				
		4/20/2023	50,322,582	12/31/2025	986	27.7%	13,963,747				
		4/20/2023	209,677,418	12/31/2025	986	27.7%	58,182,278				
		Ընդամենը	960,000,000				283,130,091	30,000,000	**1,213,130,091**	**1,337,742,814**	**960,000,000**
5	**«Յունիվերսալ Քլոզըրս» ՓԲԸ**	6/9/2023	1,676,999,973	12/31/2025	936	26.3%	441,744,398		**2,118,744,370**	**2,336,381,792**	**1,676,999,973**
6	**«Տավրոս ԿՎՄ»**	8/13/2021	83,300,000	12/31/2025	1601	45.1%	37,531,721		**120,831,721**	**133,243,555**	**83,300,000**
7	**«Դոմ Արենա» ՓԲԸ**	11/30/2021	60,000,000	12/31/2025	1492	42.0%	25,193,135				
		1/18/2022	58,000,000	12/31/2025	1443	40.6%	23,553,555				
		3/9/2022	49,080,000	12/31/2025	1393	39.2%	19,240,565				
		4/1/2022	110,123,077	12/31/2025	1370	38.6%	42,458,148				
		Ընդամենը	277,203,077				110,445,404		**387,648,481**	**427,467,733**	**277,203,077**
8	**«Սի Էֆ Դաբլյու» ՓԲԸ**	5/4/2023	1,539,580,000	12/31/2025	972	27.4%	421,144,053		**1,960,724,053**	**2,162,129,627**	**1,539,580,000**

»:

2. Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետում «ներդրումային ֆոնդում» բառերը փոխարինել «բացառությամբ ներդրումային ֆոնդերում» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4-րդ կետով սահմանված ներդրումային պայմանագրում և «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոններում համապատասխան փոփոխությունների կատարումն ու գրանցումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում.

2) մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը ապահովել «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության կողմից որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 3.2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերին համապատասխան առաջարկների ներկայացումը մասնավոր գործընկերներին՝ համաձայն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի N 1.1 աղյուսակի:

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը ապահովել որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 3.3-րդ կետով նախատեսված բյուջետային վարկի տրամադրման պայմանագրի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի նախագծերի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ